ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հոկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

143
(2993)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՏԱՇԻՐ»-ԻՆ ՄԵՐԺՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ՏՆՕՐԵՆԻՆ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ԴԱՐՁՐԵՑ



Իշխանության «թշնամի» հռչակված «Տաշիր» ընկերության նախկին տնօրենը առողջապահության նախարարության փոխնախարար է նշանակվել, ինչը ՔՊ-ական «սկզբունքները» հարցականի տակ է դնում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխանությունը սկսել է ակտիվ քննարկել «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ը ռուսահպատակ մեծահարուստ Սամվել Կարապետյանից՝ «Տաշիր Գրուպից» խլելու հարցը: Սրա ապացույցը եղան Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) նախագահ Գարեգին Բաղրամյանի եւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության փոխնախարար Հակոբ Վարդանյանի պաշտոնանկությունները. վերջինս համակարգում էր էներգետիկ ոլորտը:

Սակայն այս իրողությանը զուգահեռ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 25-ին որոշում կայացրեց Լեւոն Հակոբյանին նշանակել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ:

Հակոբյանը 2016-2019 թվականներին աշխատել է «Տաշիր Ինվեստ Գրուպ»-ում, վերջում՝ որպես տնօրեն:

«Տաշիր Ինվեստ Գրուպ» ՓԲԸ-ն եւս պատկանում է ռուսաբնակ գործարար Սամվել Կարապետյանին: Արդյոք Լեւոն Հակոբյանի կենսագրությունը դիտարկելիս Անահիտ Ավանեսյանը հաշվի առե՞լ է այս հանգամանքը:

Հարկ է նշել եւ հիշեցնել, որ առողջապահության ոլորտը համակարգող նախարարը մասնագիտությամբ բժիշկ չէ, փոխնախարարը եւս բժիշկ չէ, եւ շատ մասնագետներ աղաղակում են, որ ոլորտը տապալվում է:

Այս նախարարությունում պետականության գիտակցում ունեցողների ակնհայտ դեֆիցիտ կա. փոխնախարար Լենա Նանուշյանն իր որդուն ազատել է հայկական բանակում պարտադիր զինծառայությունից, Ավանեսյանը որեւէ պատիժ չկրեց Աբովյանի դիահերձարանի հատակին լցված մեր հերոսների մարմինների հետ նման վերաբերմունքի համար:

Կարճ ասած՝ ամենաթողություն է այս համակարգում:

Որ ոլորտներ նվաճելու բազմապրոֆիլ գործունեությամբ օժտված հատուկենտ անձինք կան: Դիցուք՝ ԱԺ պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդին՝ Վահե Աղազարյանը, համաշխարհային գիտության օրրան Ֆիզիկայի ինստիտուտին մատակարարում է 845 հազար դրամի Ա 4 ֆորմատի թուղթ: Այո՛, «Ժողովուրդ» օրաթերթը այս տվյալները վերցրել է բաց աղբյուրներից: Նույն Վահե Աղազարյանը միաժամանակ ՀՀ ԿԱ պետգույքի կոմիտեի ավտոմոբիլներն է աստղաբաշխական գնով վերանորոգում: Օրինակ՝ 2013 թվականին «Տոյոտայի» յուղն է փոխում 1.2 միլիոն դրամով (տե՛ս փաստաթուղթը «Արմլուր» լրատվական կայքում): Հեղափոխությամբ ծնված նորօրյա բիզնեսմենները գուցե ավելի արագ մոտեցնեն ծնողների քաղաքական վախճանը, քան ընդդիմության միտինգների առաջնորդները: Արգիշտի Քյարամյանին, թերեւս, չէր խանգարի հաճախ մամուլ ընթերցել, իրականության հետ առերեսվել եւ Հովիկ Աղազարյանի բիզնեսմեն դարձած որդիներին մոտիկից ծանոթացնել տարբեր օրենսգրքերի:

Ավարտական փուլում է քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «Ֆազի» սպանության գործը, ու առաջիկայում նախաքննական մարմինը նախաքննության ավարտ կհայտարարի: Հիշեցնենք, որ 2024 թվականի հունիսի 11-ին կրակոցներ էին հնչել Աջափնյակ վարչական շրջանում, եւ սպանվել էր քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանը՝ «Ֆազ»-ը: ArmLur.am-ը դեպքից անմիջապես հետո գրեց՝ կասկածներ կան, որ Սերգեյ Գրիգորյանի սպանությունը կապ ունի քրեական հեղինակություն Ռուստամ Ստեփանյանի՝ «Չաղ Ռուստամի» հետ, քանի որ վերջիններս լարված հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ. երկու ամիս անց կասկածները փարատվեցին: Իրավապահները սպանությունից 2 ամիս անց ձերբակալեցին եւ կալանքի տարան Ռուստամ Ստեփանյանին ու եւս մեկ անձի, իսկ բուն սպանություն կատարողները դեռ փնտրվում են: Նշենք, որ Ռուստամ Ստեփանյանը չի ընդունում մեղադրանքը, եւ այս պահին կալանքը կրում է ԱԱԾ մեկուսարանում:

ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանն առաջարկում է խստացնել թմրանյութերի ապօրինի շրջանառության համար նախատեսված պատիժը: Իշխանական պատգամավորը պատրաստվում է հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որով թմրանյութերի առքուվաճառքով զբաղվողների համար նախատեսված պատիժը, որը գործող օրենքի համաձայն 3-6 տարի է, երկարեցվի՝ ընդհուպ 15 տարի: ArmLur.am-ի հետ զրույցում Հայկ Սարգսյանն ասում է՝ թմրանյութերի շրջանառության համար նախատեսված 3-6 տարի պատիժն անհամաչափ է. «Պետք է լինի սպանության կամ սպանության փորձի պատժի չափով, օրինակ՝ մինչեւ 15 տարի»: ՆԳ նախարար Վահե Ղազարյանն էլ լսումների ժամանակ հայտարարեց, որ դատարանից դատավորը գրավի դիմաց բաց է թողնում տվյալ արարքը կատարողին, քանի որ դա ծանր հանցագործություն չի համարվում, պետք է համարվի ծանր հանցագործություն, որպեսզի դատավորը, ով ստորագրությամբ բաց է թողնում, իմանա, որ չենք թողնելու»,- ասաց նա: Իսկ ե՞րբ նախագիծը կդրվի շրջանառության մեջ. Սարգսյանն ասաց, որ նախագիծը դեռ մշակման փուլում է. «Խմբակցությունում պետք է քննարկենք, հետո՝ կառավարության մեր գործընկերների հետ եւ նոր դնենք շրջանառության մեջ: Ճիշտ է, երկար կտեւի, բայց կարեւոր է սրա մասին խոսելը, որպեսզի թմրանյութերի շրջանառությամբ զբաղվող մարդիկ իմանան՝ խիստ պատժվելու են»,- ասաց Սարգսյանը: Թերեւս «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը մեծ դիմադրություն չցուցաբերի այս նախագծի մասով՝ հաշվի առնելով անցյալում նրա ունեցած առնչությունը թմրանյութերի գործով:

ԶՐՈՒՅՑ

ՍՐԲԱԶԱՆԸ՝ ԱԺ ՄԻՋԱԴԵՊԻ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ArmLur.am-ը գրել էր, որ Բագրատ Սրբազանը գնալու է ԱԺ:



Նա մասնակցել է «Հայաստան» խմբակցության նախաձեռնած լսումներին, որի ընթացքում քննարկվել է խմբակցության ներկայացրած «Հայաստանի Անկախության մասին հռչակագրի անժամանցելի արդիականության մասին» ԱԺ հայտարարության նախագիծը:

Նշենք նաեւ, որ Բագրատ Սրբազանը ելույթ է ունեցել Ազգային ժողովում կայացած լսումների ընթացքում:

«Ժողովուրդ» օրաթերթը Ազգային ժողովում զրուցել է Բագրատ Սրբազանի հետ՝ առաջիկա անելիքների, «Սրբազան շարժման» հետագա քայլերի, ինչպես նաեւ ԱԺ-ում Հովիկ Աղազարյանի եւ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի մասին:

-Սրբազան, աշունը դեռ չսկսած՝ ասում էիք, որ թեժ աշուն է լինելու: Տեղեկություններ կան, որ առաջիկայում մեծ հավաք է լինելու: Ի՞նչ ծրագրեր ունեք:

-Հանրությունը հետագա ծրագրերի մասին կիմանա անպայման, Ձեր միջոցով կտեղեկացնեմ:

-Սրբազան հա՛յր, թե՛ ընդդիմադիր, թե՛ իշխանական շրջանակներից մեղադրում են, ասում են, որ Սրբազանը որեւէ հստակ ծրագիր չի ներկայացնում, քանի որ հստակ անելիքներ չկան եւ չգիտի՝ ինչ է անում:

-Անդադար կրկնելու կարիք չկա, բոլոր ծրագրերը՝ թե՛ պետության ապագայի վերաբերյալ, թե՛ ընթացիկ գործունեության, ներկայացված են: Մեզ մնում է քայլ առ քայլ գործողությունների ծրագիրը ներկայացնել, որի կարիքը այս պահին չկա:

Յուրաքանչյուր գործողություն իր բովանդակությունն ունի:

-Իսկ օրակարգո՞ւմ է դեռեւս այն, որ նշում էիք, թե մինչեւ հաջորդ ընտրություններ այս իշխանությունն այլեւս չի լինելու եւ հերթական ընտրություններին չենք հասնելու:

-Ընտրության խնդիր դրված չկա:

-Իսկ Ձեր անունը՝ որպես վարչապետի թեկնածուի, շարունակո՞ւմ է օրակարգում մնալ:

-Այդ հարցը շատ պայմանական է բոլոր առումներով: Եթե կան ցանկություն ունեցող պատասխանատու մարդիկ, ապա կարող են լինել վարչապետի թեկնածու:

-Տեսանք, որ իշխանության ներսում էլ ամեն բան խաղաղ չէ: Օրերս ականատես եղանք քննչական կոմիտեի եւ իշխանական պատգամավորների միջեւ Ազգային ժողովում տեղի ունեցած մեծ կռվին ու հրմշտոցին: Սա ցույց է տալիս, որ իշխանության ներսում ամեն բան չէ, որ հարթ է:

-Սա ողջ պետական կառավարման համակարգի պերճանքն ու թշվառությունն է, որ ամբողջությամբ դրսեւորվեց եւ արտահայտվեց: Սա պարզապես մի դրվագ է, որը ցույց է տալիս այն խորքային իրավիճակն ու աղետը, որի մեջ մենք գտնվում ենք:

Ավելի ուշ Բագրատ սրբազանն Ազգային ժողովի ամբիոնից ելույթ ունեցավ, որի ընթացքում ասաց. «Այո՛, այս փուլում մենք չհաջողեցինք, սակայն այս պայքարի ընթացքը շարունակվում է՝ հակառակ բոլոր տեսակի մարդկային տկարությունների, շահերի եւ խարդավանքների, որովհետեւ այս պայքարն այս անպատիվ ընթացքը կասեցնելու, մեր պետականությունը վերականգնելու մասին է: Այո՛, մենք այս պահին չկարողացանք կանգնեցնել Կիրանց, Ոսկեպար հատվածի հանձնման աղետը, բայց, կարծում եմ, այս ընթացքում կարողացանք կանգնեցնել այն ընթացքը, որը պարունակում էր անկլավների հանձնում, նոր տարածքների զիջումներ, ու այս վերջին՝ աշխատանքային կանոնակարգ կոչվածը, որը նախատեսվում էր ստորագրել մայիս-հունիս ամիսներին եւ, ինչու չէ, նաեւ Ադրբեջանի կողմից պարտադրված Սահմանադրական փոփոխությունների իրականացումը: Երբ մենք շեշտում էինք, որ սա սահմանազատում եւ սահմանագծում չէ, այլ միակողմանի զիջում պարտադրանքի ներքո՝ ոմանք չէին ցանկանում հասկանալ կամ չէին հասկանում»:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 234

ԱՐՏԵՐԿՐԻՋ ՉԵԿԱՆ՝ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ

2018 թվականի մայիսի 7-ին ՀՀ Կառավարության ծրագիրը ներկայացնելիս ՀՀ Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Եվս մեկ անգամ կոչ եմ անում շուրջ մեկ տասնյակ հազար մեր հայրենակիցներին, ովքեր գտնվում են արտերկրում եւ ում նկատմամբ ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու դատճառով հետախուզում է հայտարարված. սիրելի՛ բարեկամներ, եղբայրներ, վերադարձե՛ք Հայաստան, մեկնե՛ք ժամկետային զինվորական ծառայության եւ հայրենիքի անվտանգության ձեր բաժին դատասխանատվությունն անելու: Սա նոր Հայաստան է, այստեղից չեն փախչում որեւէ, այդ թվում՝ բանակից խուսափելու դատճառաբանությամբ: Այստեղ վերադառնում են այսօրվա եւ ապագայի նկատմամբ ունեցած դատասխանատվության եւ սիրո զգացողությամբ: Սպասում եմ յուրաքանչյուրիդ, ապացուցե՛ք, որ հաղթանակած ժողովրդի «դուխով» զավակներն եք»:

Թե քանի հոգի Նիկոլ Փաշինյանի կոչին անսաց, վերադարձավ Հայաստան եւ զորակոչվեց, հրապարակված որեւէ թիվ չունենք: Սակայն այս հայտարարությունից 5 տարի անց ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը Նիկոլ Փաշինյանի ելույթին լրիվ հակառակ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ՝ առաջարկելով, որ բանակից խուսափած՝ 27 տարին չլրացած անձը 15 մլն դրամ վճարի եւ ազատվի բանակից ու քրեական պատասխանատվությունից: Ըստ պատգամավորի հայտնած վիճակագրության՝ 2022 թվականի դրությամբ ունեցել ենք 10 հազարից ավելի քաղաքացիներ, ովքեր հետախուզվել են բանակում չծառայելու համար եւ այդ 10 հազար քաղաքացուց ընդամենը 420-ն են հայտնաբերվել կամ կամովին ներկայացել: Համեմատելով պատգամավորի հնչեցրած թիվը եւ Նիկոլ Փաշինյանի՝ 2018 թվականին հնչեցրած թիվը, կարելի է պնդել, որ Նիկոլ Փաշինյանի կոչին հետեւողներ չեն եղել, իսկ հակառակ պատկերը՝ բանակից խուսափելու դեպքերը, ավելացել են:

Ընդ որում, ուշագրավ է, որ անգամ Նիկոլ Փաշինյանի ղեկավարած կառավարությունում եւ կուսակցությունում կան բանակից խուսափելու բազմաթիվ դեպքեր. բերենք մի քանի օրինակ: ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի կրտսեր որդին բանակում չի ծառայել, նախ՝ երկու անգամ ստանալով տարկետում ուսման համար, որից հետո երկու անգամ առողջապահական տարկետում՝ մինչեւ թեկնածուական ատենախոսությունը կպաշտպաներ: Մինչ իր որդուն բանակից ազատելը Անդրանիկ Քոչարյանը հայտարարել էր. «Ուզում եմ՝ բանակում չծառայելն իրապես անհնար լինի, ծառայելը՝ պատվաբեր»:

«Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ բանակում չեն ծառայել նաեւ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի որդիները:

Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը պետք է զորակոչվեր բանակ 2018 թվականի հեղափոխությունից հետո, սակայն այդպես էլ ծառայության չգնաց:

Ինչպես հայտնի է, Նիկոլ Փաշինյանը ինքը բանակում ծառայելուց խուսափել է ժամանակին, որի պատճառի մասին տարբեր վարկածներ են հրապարակվել՝ սկսած նրանից, որ տան 3-րդ որդին է եղել, այդ պատճառով ազատվել է, մինչեւ անգամ հոգեկան վիճակի խնդրով տեղեկանքի հիման վրա: Այնուամենայնիվ, անկախ պատճառից, օրինական հիմքով, թե ոչ՝ Նիկոլ Փաշինյանը իր ժամանակին խուսափել է ՀՀ զինված ուժերում պարտադիր զինծառայությունից:

25 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գործադիրի որոշմամբ կառավարության պահուստային ֆոնդից 25 միլիոն դրամ կհատկացվի ՀՀ վարչապետի, նախագահի՝ առաջիկայում նախատեսվող օտարերկրյա պետություններ այցելությունները պատշաճի կազմակերպելու համար:

Վարչապետի, նախագահի օտարերկրյա պետություններ այցելությունների համար պետբյուջեից գումար հատկացնելու որոշումը կառավարությունը հետեւյալ կերպ է պարզաբանում: «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը, ի թիվս այլ գործառույթների, զբաղվում է նաեւ ՀՀ նախագահի եւ վարչապետի, երբեմն նաեւ փոխվարչապետի՝ օտարերկյա պետություններ այցերի կազմակերպմամբ: Վերոնշյալ պաշտոնյաների՝ օտարերկրյա այցելությունների աճով պայմանավորված՝ աճել է նաեւ պետական արարողակարգի ծառայության աշխատակիցների գործուղումների քանակը, որի հետեւանքով 2024 թ. ՀՀ պետական բյուջեով գործուղումների գծով նախատեսված գումարները չեն բավականացրել»:

Կառավարության հիմավորման մեջ նշվում է, որ արտասահմանյան գործուղումների համար նախատեսված 51 միլիոն 64 հազար դրամն ամբողջությամբ սպառվել է եւ հետագա անխափան աշխատանքային գործունեությունն ապահովելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել պետական բյուջեից պետական արարողակարգի ծառայությանը լրացուցիչ միջոցներ հատկացնել:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԴԻՈԿԱՅԱՆՈՒՄ ԽՈՍՎԵԼ ԷՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստամբուլի Acik Radyo ռադիոկայանից հայտնել են, որ ռադիոկայանը փակել են իշխանությունների որոշմամբ: Ինչպես տեղեկացրել է AFP-ը, լրագրողները խոստացել են աշխատանքը շարունակելու միջոց փնտրել:

Acik Radyo ռադիոկայանի հետապնդումն սկսվել է այն բանից հետո, երբ ապրիլին կայանի հյուրերից մեկը եթերում խոսել է Հայոց ցեղասպանության մասին: Դրանից շատ չանցած՝ մայիսին, վերահսկիչ մարմինը դադարեցրել է կայանի հեռարձակումը հինգ օրով՝ նրան մեղադրելով «ատելության հրահրման» մեջ: Հուլիսին իշխանությունները Acik Radyo-ից վերցրել են լիցենզիան, բայց ռադիոկայանը դեռ մի քանի ամիս շարունակել է աշխատել:

Թուրքիայի իշխանությունները բոլոր մակարդակներում հրաժարվում են ցեղասպանություն ճանաչել Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. իրականացված հայ բնակչության զանգվածային սպանությունները եւ աքսորը: Այս տարի Թուրքիան զբաղեցրել է 158-րդ տեղը 180-ից մամուլի ազատության ինդեքսով, որն ամեն տարի հրապարակում է «Թղթակիցներ առանց սահմանների» միջազգային կազմակերպությունը:

Acik Radyo ռադիոկայանը աշխատում էր 1995 թվականից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԵՆԶԱՏԱՐԻ ՊԱՅԹՅՈՒՆ ՆԻԳԵՐԻԱՅՈՒՄ

Նիգերիայի հյուսիսում բենզատարի պայթյունի զոհերի թիվը հասել է 140-ի:

Այդ մասին հաղորդում է Kommersant-ը՝ վկայակոչելով երկրի արտակարգ ծառայությունների աղբյուրը:

Ըստ աղբյուրի՝ մահացածների մեծ մասը փորձել է վառելիք հավաքել շրջված բաքից:

Միջադեպը տեղի է ունեցել երկրի կենտրոնական՝ Ջիգավայի նահանգում: Նախնական տվյալներով՝ բենզատարի վարորդը կորցրել է մեքենայի վերահսկողությունը, որը վթարի է ենթարկվել եւ պայթել:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԵՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆԻՑ ՀԶՈՐ ԶԵՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրանը միջուկայինից շատ ավելի հզոր զենք ունի: Այդ մասին հայտարարել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի զարգացման եւ սպառազինության հանձնաժողովի նախկին քարտուղար Էբրահիմ Ռոստամին: Նրա խոսքերը փոխանցում է IFP գործակալությունը:

«Մենք ունենք սարքավորումներ, որոնք շատ ավելի հզոր են, քան միջուկային զենքը»,- նշել է Ռոստամին՝ ձեռնպահ մնալով այլ մանրամասներ ներկայացնելուց:

Նախորդ շաբաթ Իսրայելի նախկին վարչապետ Նաֆթալի Բենեթը հայտարարել էր, որ Մերձավոր Արեւելքում պատմական հանգամանքներ են ստեղծվել Իրանի միջուկային օբյեկտների վրա հարձակվելու համար: Դրանից անմիջապես հետո իրանցի 39 պատգամավորներ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդին կոչ էին արել արտոնել միջուկային զենքի ստեղծումը՝ հրեական պետության հնչեցրած սպառնալիքների պատճառով: Իրանի պաշտպանական դոկտրինը, հիմնվելով Գերագույն առաջնորդ Ալի Խամենեի որոշման վրա, արգելում է միջուկային զենքի ստեղծումը, քանզի համարվում է, որ դա հակասում է իսլամի սկզբունքներին:

ԶԵԼԵՆՍԿՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն, մեկնաբանելով Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու խաղաղության ծրագիրը, հայտարարել է, որ Ուկրաինան, հավանաբար, կդառնա Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ, սակայն ժամկետների վերաբերյալ որեւէ հստակ տեղեկություն չի նշել: Այս մասին հայտնում է «Ինտերֆաքսը»-ը:

Մարկ Ռյուտենի խոսքով՝ ՆԱՏՕ-ն ի գիտություն է ընդունել ծրագիրը եւ այն կքննարկի փակ դռների հետեւում:

«Ուկրաինան, իհարկե, կմիանա դաշինքին, երբ գա հարմար պահը, բայց չեմ կարող հստակ նկարագրել, թե ինչպես է Ուկրաինան մտնելու ՆԱՏՕ»,- ասել է Ռյուտեն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀՀ-ԻՆ ՈՉԻՆՉ ՉԻ ՏԱԼՈՒ», ՕՍԿԱՆՅԱՆ

Ադրբեջանը ՀՀ-ին ոչինչ չի տալու եւ, այո՛, աբսուրդային պահանջներ է դնելու, բանի դեռ ՀՀ-ն չի կարողանում որեւէ հակընդդեմ պահանջ ներկայացնել:

Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Նախկին ԱԳՆ-ն մասնավորապես անդրադարձել է. «Սովորաբար նման բան չեմ անում, բայց ուզում եմ հիմա ուղիղ մեջբերում անել Նիկոլ Փաշինյանի՝ վերջերս հնչեցրած մի ելույթից. «Ադրբեջանն ուզում է, որ Հայաստանի ճանապարհները օգտագործելի լինեն իր համար, եւ միեւնույն ժամանակ Հայաստանը շարունակի մնալ շրջափակման մեջ: Թվում է՝ սա աբսուրդ ձեւակերպում է, բայց ադրբեջանական խոսույթների մեր վերլուծությունը ցույց է տալիս դա»:

Ցավալի է, որ երկրի վարչապետին այս «հայտնագործության» համար անհրաժեշտ էր ավելի քան երկու տարի եւ իր իսկ ձեւակերպմամբ «ադրբեջանական խոսույթների վերլուծություն»:

Ի՞նչ վերլուծության կարիք կար, երբ արդեն ավելի քան երկու տարի զգուշացնում ենք, որ Ադրբեջանը ստանալու է իր համար մաքսիմումը՝ Հայաստանին չտալով նույնիսկ ակնկալվող մինիմումը: Ադրբեջանի արածը աբսուրդ չէ՝ սեփական մաքսիմալիստական նկրտումների լկտի պարտադրում է դիմացի կողմին, որն անընդունակ է պաշտպանել սեփական մինիմալ շահերը:

Աբսուրդը Հայաստանի կառավարության բանակցային կարողություններն են: Մարդ կարող է փորձ ու գիտելիք չունենալ, բայց համառորեն անտեսել տասնյակ տարիների փորձով մարդկանց զգուշացումները: Իսկապես աբսուրդ է: Սա նման է 2018-ի «բանակցությունները սեփական կետից» սկսելու հայտարարությանը: Ինչ եղավ դրանից հետո՝ տեսանք: Հիմա նույնն է. երկու տարի շարունակ զգուշացնում ենք, որ Ադրբեջանը ոչինչ չի տալու ու մաքսիմալը պոկելու է, քանի որ դու ոչ մի օրակարգ չունես, ամեն ինչին ասում ես «այո», բանակցային սեղանին ոչ մի պահանջ չես դնում:

Երբ դեռ հնարավոր էր կանխել Արցախի ամբողջական կորուստն ու հայաթափումը, ասում էինք՝ հնարավորություն տուր բանակցելու այն մարդկանց, որոնք, ի տարբերություն քո թիմի, գիտեն՝ ինչ բան է բանակցությունը: Արցախի հայաթափումից հետո զգուշացնում էինք, որ Ադրբեջանը սրա դիմաց էլ, հակառակ քո սպասումներին, քեզ ոչինչ չի տալու, իսկ իր համար մաքսիմալն է պահանջելու: Էլի՝ քար լռություն: Վստահ եմ՝ այս մարդը համոզված էր, թե մենք ուզում ենք իրեն մոլորեցնել, որ բանակցային սեղանին ոչ մի պահանջ չդնելով՝ ինքը հասնելու է ինչ-որ արդյունքի:

Ես շարունակում եմ պնդել՝ Ադրբեջանը Հայաստանին ոչինչ չի տալու եւ, այո՛, աբսուրդային պահանջներ է դնելու, քանի դեռ հայկական կողմը չի կարողանում որեւէ հակընդդեմ պահանջ ներկայացնել:

Շարունակում եմ պնդել, որ արցախցիների վերադարձի պահանջը բանակցային սեղանին դնելը դիվանագիտական բոլոր կանոններով ընկալելի եւ ընդունելի կլինի միջազգային հանրության բոլոր կողմերի ու խաղացողների համար: Լավագույն վերջին ապացույցը Շվեյցարիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդունած բանաձեւն է: Ավելին՝ արցախցիների վերադարձի պահանջի բարձրացումը ծայրահեղ անհրաժեշտություն է առաջին հերթին Հայաստանի անվտանգության համար, որպեսզի Ադրբեջանը դադարի Հայաստանի իշխանություններին «զարմացնել» իր աբսուրդ պահանջներով:

Եվ ես շարունակում եմ պնդել, որ եթե օրվա իշխանությունները անկարող են բանակցային օրակարգ ձեւավորել, ապա պետք է թույլ տան, որ դա անեն ավելի կարող ուժեր»,- գրել է Օսկանյանը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՖԻՐԴՈՒՍԻ ՇՈՒՐՋ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՆ ՍՊԱՍՎՈՒՄ

33-րդ թաղամասը՝ Ֆիրդուսի թաղամասը, նոր ձեռքբերող ունի՝ «Էլիտ Հոլդինգ» ՍՊԸ-ն, կառավարությունը լիազորել է Երեւան քաղաքի քաղաքապետ Տիգրան Ավինյանին՝ ընկերության հետ պայմանագիր կնքելու համար:

«Լիազորել Երեւանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության անունից «Էլիտ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել Երեւան քաղաքի 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասին հարող որոշ տարածքներում սեփականության օտարման գործընթացի ընթացքում պետության եւ ձեռք բերողի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը սահմանող պայմանագիր»,- ասվում է Կառավարության օրակարգային հարցի նախագծում:

Համաձայն Կառավարության որոշման հիմնավորման՝ պայմանագիրը կնքելուց հետո հնարավոր կլինի նշված տարածքների նկատմամբ ճանաչել հանրային գերակա շահ՝ ձեռք բերող ճանաչելով արդեն «Էլիտ Հոլդինգ» ընկերությանը եւ ավարտին հասցնել քաղաքաշինական ծրագիրը, որով Երեւանի կենտրոնից կվերանա կիսախարխուլ ոչ սեյսմակայուն բնակելի ֆոնդը: «Երեւանի քաղաքապետին լիազորություն վերապահելու մասին» կառավարության որոշման նախագծի փաթեթի վերաբերյալ ստացված դիտողությունների եւ առաջարկությունների շարքից հստակ հասկանում ենք, որ Տիգրան Ավինյանին լիազորելու հարցում մեղմ է եղել ՀՀ ֆինանսների նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, Կադաստրի կոմիտեն, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, սակայն ՀՀ արդարադատության նախարարությունը չի ընդունել այս որոշումը ի գիտություն:

Մասնավորապես, արդարադատության նախարարությունը չի համաձայնել, քանի որ պնդել է հստակեցնել, թե ՀՀ կառավարությունը Երեւան քաղաքի 33-րդ թաղամասին հարող կոնկրետ որ տարածքների (հասցեների) մասով է լիազորում Երեւանի քաղաքապետին պայմանագիր կնքել «Էլիտ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ:

Հարկ է նշել, որ 2018 թվականին թաղամասի ձեռքբերող էր ճանաչվել «Արդահան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, որի հետ պայմանագիրը խզվել է, քանի որ սահմանված ժամկետներում դեպոզիտ հաշվին չի հանձնել փոխհատուցման գումարը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ

Հայաստանի անկախության համար այդքան հիմնարար փաստաթղթի՝ Անկախության հռչակագրի խեղաթյուրման եւ դերի նսեմացման փորձերը անթույլատրելի են: Այս մասին հայ-ադրբեջանական սահմանազատման եւ սահմանագծման պետական հանձնաժողովների աշխատանքի կանոնակարգի, ինչպես նաեւ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի անկախության հռչակագրի անժամկետ ակտուալության մասին» հայտարարության նախագծի վերաբերյալ հոկտեմբերի 17-ի խորհրդարանական լսումներում ասել է «Հայաստան» ընդդիմադիր խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը: Հայտարարության նախագծի հեղինակները, մասնավորապես, դատապարտում են Հռչակագրի եւ ՀՀ Սահմանադրության արհեստական հակադրման փորձերը: «Որոշման նախագիծը Հռչակագրում դրված համազգային արժեքները եւ գաղափարները համարվում են երկրի անվտանգության հիմքը, եւ ցանկացած ոտնձգություն այդ արժեքների դեմ՝ առանձնակի ծանր հանցագործություն է Հայաստանի դեմ»,- նշել է Մանուկյանը՝ ընթերցելով հայտարարության նախագծի տեքստը: Փաստաթղթի հիմնավորման մեջ նաեւ ասվում է, որ դրա անհրաժեշտությունը բխում է անվտանգության նկատառումներից:

ՔՐԳՈՐԾ

ԻՆՉ ՎԱՐՈՒՅԹՈՎ Է ԱՆՑՆՈՒՄ ԱՂԱՋԱՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քննչական կոմիտեն արգելանքի տակ է վերցրել պատգամավոր Հովիկ Աղազարյանի որդու ընկերությանը պատկանող մի քանի մեքենաներ:

2023 թվականի օոգոստոսի 1-ին ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես տեղեկացվել էր, որ կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում շարունակվում է «Ավտոներկրողներ», «Ավտոներկրողների միություն» եւ «Ավտոներկրող-4» ՍՊ ընկերությունների գործունեության արդյունքում թույլ տրված չարաշահումների դեպքերի առթիվ քրեական վարույթով նախաքննությունը:

Քննությամբ ձեռք բերված տվյալներով՝ պարզվել է, որ Տ.Հ.-ն, հանդիսանալով պետական գրանցում ստացած վերոնշյալ ընկերությունների գործունեությունը փաստացի ղեկավարող անձ եւ փաստացի սեփականատեր, ընկերությունների միջոցով նպատակադրված լինելով պետությունից խարդախությամբ հափշտակելու առանձնապես խոշոր չափերի գումարներ՝ համաձայնության է եկել ավտոմեքենաների ներմուծմամբ զբաղվող բազմաթիվ ֆիզիկական անձանց հետ՝ իր ընկերության անվամբ վերջիններիս պատկանող ֆինանսական միջոցներով ավտոմեքենաներ ներկրելու եւ ԵԱՏՄ երկրներ արտահանելու հարցի շուրջ, պայմանով, որ վերադարձման ենթակա ԱԱՀ-ի հիսուն տոկոս գումարը մնալու է իրեն, որն էլ եղել է նրա օգուտը, իսկ մյուս հիսուն տոկոսը տրվելու է ֆիզիկական անձանց:

Համաձայնության շրջանակներում ֆիզիկական անձանց տրված լիազորագրերի հիման վրա՝ 2020-2023 թվականների ընթացքում ֆիզիկական անձանց կողմից ներգրավված ֆինանսական միջոցներով տարբեր երկրներից հիշյալ ընկերությունների անվամբ ներկրվել է շուրջ 8.447 տրանսպորտային միջոց, որոնց մի մասն արտահանվել է ԵԱՏՄ անդամ երկրներ, եւ դրանց վերաբերյալ առքուվաճառքի պայմանագրերում փաստացի խեղաթյուրվել են գործարքի իրական շահառուի, վաճառքի իրական գների տվյալները: Ձեռք բերման գնից պակաս ցույց տալու արդյունքում հիշյալ ընկերությունների կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված հաշվարկ-հաշվետվություններում արհեստականորեն առաջացել են 5 մլրդ. 700 մլն. ՀՀ դրամի չափով հարկային վնասներ, իսկ ԱԱՀ-ի հաշվետվություններում՝ խարդախությամբ հափշտակելու նպատակով, ձեւավորել են վերադարձման ենթակա 3 մլրդ. 868 մլն. դրամի չափով ԱԱՀ-ի դեբետային գումարներ: Դրանք հափշտակելու նպատակով ՀՀ ՊԵԿ-ին 02.04.2021-16.11.2022 թթ. ընթացքում ներկայացվել են պարզեցված ընթացակարգով՝ յուրաքանչյուր դեպքում մինչեւ 40 մլն. ՀՀ դրամի սահմաններում, դեբետագրված ԱԱՀ-ի գումարները վերադարձնելու 12 դիմումներ, որոնց հիմքով՝ 12.04.2021-17.11.2022 թթ. ընթացքում ընկերությունների բանկային հաշվին փոխանցման արդյունքում խարդախությամբ հափշտակվել է միայն առանձնապես խոշոր չափերի՝ 406.596.400 ՀՀ դրամը:

Ընկերությունները, վերոգրյալ գործարքներն իրականացնելով, իրականում ոչ թե իրականացրել են ձեռնարկատիրական գործունեություն, այլ նպատակ են ունեցել ձեռնարկատիրական գործունեության քողի ներքո պետությունից կատարելու հափշտակություն: Դատելով իրավիճակից՝ հենց այս քրեական գործով են զանգահարել քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, որի մասին նա հրապարակային բացահայտում արեց Ազգային ժողովում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՐՈՇՈՒՄ

Այսօր (խմբ.) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում կկայացնի Աժ նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր կալանքի գործով: Տեսնենք՝ նա կազատվի՞ կալանքից, թե՞ ոչ: Նշենք որ պաշտպանական կողմը բողոքարկել էր նրա կալանքի որոշումը:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության կողմից տեղեկություններ են ստացվել, որ մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հարցաքննությունների արդյունքում՝ բավարար փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ քաղաքացիներ Ս.Գ.-ն, Ա.Ե.-ն, Ա.Հ-ն, Ե.Ս.-ն, Ա.Ս-ն, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի նախկին բնակիչներ Ա.Մ.-ն Ա.Ս.-ն, ինքնությունները դեռեւս չպարզաբանված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, կատարել են իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն, այն է՝ դիտավորությամբ ստեղծել են Հայաստանի Հանրապետության իշխանությունը զավթելու՝ բռնություն գործադրելու եւ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով ՀՀ կառավարության լիազորություններին տիրանալու համար պայմաններ:

Մասնավորապես, նշված անձինք, նախնական համաձայնությամբ, ՀՀ իշխանությունը զավթելու նպատակով, վարձատրության՝ յուրաքանչյուրին ամսական շուրջ 220.000 ՌԴ ռուբլի վճարի դիմաց, Ռուսաստանի Դաշնությունում եռամսյա հավաքներ անցնելու եւ դրա ընթացքում նոր ծանր զինատեսակներին ծանոթանալու, դրանց կիրառման հմտություններ ուսանելու:

Բացի դրանից, նրանց հայտնել են, որ վարժանքների նպատակը Հայաստանի Հանրապետություն վերադառնալն ու գործող իշխանությանը հեռացնելն է՝ հնչեցնելով այդ կերպ Հայաստանի Հանրապետությունը մաքրելու եւ փրկելու կոչեր:

ՈՒՐ՞Մ ԵՆ ԴԱՏՈՒՄ

Յուրա Օգանեզովին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության՝ Երեւանի թիվ 1 տարածքային ստորաբաժանումում, ենթակա է եղել զորակոչման 2023թ. ձմեռային զորակոչին, սակայն մինչեւ զորակոչի ավարտը չի ներկայացել ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Երեւանի թիվ 1 տարածքային ստորաբաժանում եւ, խախտելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, խուսափել է հայտարարված պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչից՝ այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության պայմաններում:

Արթուր Նորիկի Սարոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հաշվառված լինելով « ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայությունում, ենթակա է եղել զորակոչման 2023 թվականի ամառային զորակոչին, սակայն մինչեւ զորակոչի ավարտը՝ 2023 թվականի հուլիսի 31-ը ներառյալ, չի ներկայացել տարածքային ստորաբաժանում եւ, խախտելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, խուսափել է հայտարարված պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ամառային զորակոչից՝ այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանին ձերբակալելու որոշում է կայացվել:

Բալասանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել «Սեւ Բերդ» պատմամշակութային ամրոցի հարակից հողերը հանցավոր ճանապարհով օտարելու համար: Մեղադրյալների թվում են նաեւ նրա կրտսեր որդին՝ Խաչատուր Բալասանյանը:

Բալասանյաններից բացի, մեղադրյալ են նաեւ Գյումրու նախկին եւ ներկա փոխքաղաքապետերն ու եւս մեկ անձ:

ԶԵՆՔԵՐԸ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

«Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող քաղաքացիական եւ ծառայողական բոլոր զենքերը ենթակա են հաշվառման Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում՝ քաղաքացիական եւ ծառայողական զենքերի հաշվառման միասնական էլեկտրոնային շտեմարանում եւ թղթային տարբերակով, որոնց կարգը սահմանում է կառավարությունը:

«Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ չհաշվառված քաղաքացիական զենքերը քաղաքացու կողմից իրավապահ մարմիններին կամովին ներկայացվելու դեպքում, համապատասխան քրեադատավարական ընթացակարգով անցնելուց եւ վարույթ իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումից եւ օրենքով սահմանված կարգով զենք ձեռք բերելու թույլտվություն ստանալուց հետո, ոստիկանությունը զենքը հաշվառում եւ տրամադրում է քաղաքացուն՝ համապատասխան թույլտվությամբ:

Ելնելով վերոհիշյալ իրավակարգավորումներից՝ բոլոր անձանց, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված եւ Հայաստանի Հանրապետությունում վերաբնակեցված մեր հայրենակիցներին, ովքեր իրենց մոտ ունեն (իրենց հետ բերել են Հայաստանի Հանրապետություն) Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված որսորդական ողորկափող կամ ակոսափող հրազեն, գազային ատրճանակ, ինչպես նաեւ պարգեւատրական զենք, հորդորվում է ի պահ հանձնել ներքին գործերի նախարարության ոստիկանությանը՝ վերը նշված ընթացակարգերով անցնելուց հետո զենքի հետագա հաշվառման եւ տնօրինման հարցը որոշելու համար», - նշված է ոստիկանության տարածած հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 16-ից 17-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 106 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇԸ ԼՔԵԼ Է 500 ԱՐՑԱԽՑԻ

Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ 2024թ. փետրվարի 13-ին Տավուշի մարզում բնակվում էր Արցախից բռնագաղթած 786 ընտանիք՝ 2810 անձ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել, թե հոկտեմբերի 10-ի դրությամբ որքա՞ն է Տավուշի մարզում բնակվող արցախցիների թիվը: Մարզպետարանից պատասխանել են. «ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց թիվը հոկտեմբերի 10-ի դրությամբ 2310 է»: Փետրվար-հոկտեմբեր ժամանակահատվածում՝ 8 ամսում, Տավուշի մարզից հեռացել է 500 արցախցի:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում հայտարարություններ են զետեղված մարզպետի աշխատակազմում թափուր աշխատատեղերի մասին: Սեպտեմբերի 25-ից հայտարարություն էր տեղադրված Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի թափուր պաշտոնի մասին. թափուր տեղի համար դիմելու վերջնաժամկետը սեպտեմբերի 30-ն էր: Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի հիմնական աշխատավարձի չափը 322 816 դրամ է: Այդ պաշտոնի հավակնորդներին ներկայացվող «անհրաժեշտ կոմպետենցիաներն էին»՝ խնդրի լուծում, բարեվարքություն, որոշումների կայացում, աշխատակազմի կառավարում: Թեկնածուներից պահանջվող մասնագիտական գիտելիքների ցանկի մեջ «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքների եւ այլ օրենքների հետ տեղ է գտել նաեւ դպրոցական դասագիրք՝ «Ինֆորմատիկա 7-րդ դասարան»: Դասագիրք՝ հանրակրթական դպրոցի համար: (Ս.Ս. Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երեւան 2012):

ԳՈՆԵ ԹՈՒՆԵԼԻ ԱՍՖԱԼՏԻ ԾԱԾԿԸ ՆՈՐՈԳԵՆ

Քանի որ Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի վերանորոգման ծախսերը համարժեք են նոր թունել կառուցելու ծախսերին, կառավարությունը որոշել է նոր թունել կառուցել, հինը թողնել որպես պահեստային: Սակայն նոր թունելը ե՞րբ կկառուցեն, ընդհանրապես կկառուցե՞ն, թե՞ ոչ՝ հայտնի չէ: Մինչ նոր թունել կառուցելը գոնե գործող թունելի ներսում ասֆալտի ծածկը նորոգեն. թունելի հյուսիսային մասում, Տավուշի մարզից մուտքի մոտ շատ են ասֆալտի ծածկի խորդուբորդությունները: Հարկավոր է նաեւ թունելի լուսավորությունն ուժեղացնել: Կառավարությունը պետբյուջեից մեծ գումարներ է հատկացնում միջհամայնքային, համայնքամիջյան ճանապարհների ասֆալտապատման համար, սակայն միջպետական ճանապարհի թունելի ասֆալտի ծածկը չի նորոգում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՆՈՐ Է ՏԵՂԵԿԱՑԵԼ

ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆՈՒՄ ՆՈՐԻՑ ՀԵՐԹԵ՞Ր ԿՄԿՄՎԵՆ

Անձնագրային բաժանմունքներում տիրող քաոտիկ իրավիճակը ՀՀ վարչապետ Փաշինյանը կարծես թե նոր է նկատել:

Ամբողջ խնդիրն այն է, որ երեկ՝ կառավարության հերթական նիստի ժամանակ, վարչապետն ասել է, որ՝ «Նոր տարուց առաջ մարդիկ էլի կհիշեն, որ անձնագրի խնդիր ունեն, էլի հերթերը կսկսվեն»:

Բանն այն է, որ ամբողջ ամառվա ընթացքում անձնագրային բաժանմունքներում «թեժ մարտեր» էին ընթանում եւ, թվում է, թե վարչապետ Փաշինյանը իրականությունից կտրված է:

Սակայն այս պատմության մեջ ամենահետաքրքիրն էլ այն է, որ Փաշինյանի ելույթից հետո ՀՀ ՆԳՆ-ն հայտարարություն տարածեց՝ քաղաքացիներին հորդորելով նախապես ծրագրել ճամփորդական փաստաթղթերի հետ կապված գործարքները, եթե պատրաստվում են սահմանահատում կատարել առաջիկա ամիսներին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն մշտապես ահազանգեր են ստացվել եւ ստացվում անձնագրային բաժանմունքներում տիրող իրավիճակներից:

Հավելենք նաեւ, որ կան խոսակցություններ, որ Չարենցավանի եւ Հրազդանի անձնագրային բաժանմունքները ուզում են միացնել իրար եւ տեղափոխել քաղաք Հրազդան, սակայն քաղաքացիների բողոքի ալիքից հետո այդ նախագիծը սառեցվեց:

Ե՛վ ՆԳՆ ոստիկանությունը, ե՛ւ Փաշինյանը այսքան ժամանակ չեն մտել անձնագրային բաժանմունքներ՝ իրենց աչքերով տեսնելու տիրող իրավիճակը, որը, կարելի է ասել, դուրս էր եկել վերահսկողությունից:

Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«ՀՀ ներքին գործերի նախարարությունը քաղաքացիներին հորդորում է նախապես ծրագրել ճամփորդական փաստաթղթերի հետ կապված գործարքները, եթե պատրաստվում են սահմանահատում կատարել առաջիկա ամիսներին: Մասնավորապես, կարեւոր է ուշադրություն դարձնել փաստաթղթի վավերականության ժամկետին, էջերի նշումներին, որպեսզի ազատ էջեր լինեն սահմանապահի կնիքի համար, համոզվել, որ փաստաթուղթը մաշվածություն չունի, վնասված չէ: Այսօրինակ հարցերի հետաձգումը ծրագրված ճամփորդությանն ընդառաջ ռիսկային է, եւ կարող է սպասարկման գրասենյակներում հանգեցնել մարդկային կուտակումների:

Հերթերը ներկայումս բավականաչափ բեռնաթափված են, ինչը պայմանավորված է միաժամանակ սեզոնայնությամբ եւ ներդրված նոր համակարգի լուծումներով:

Հերթերի կառավարման համակարգը փոխվել է, եւ ներկայումս ինչպես Երեւանում, այնպես էլ մարզերում ծառայությունները մատուցվում են ե՛ւ էլեկտրոնային հերթագրմամբ, ե՛ւ կենդանի հերթի ձեւաչափով:

Հերթագրումներն իրականացվում են migration.e-gov.am հարթակի միջոցով: Ամրագրում ունեցող քաղաքացիներն սպասարկվում են առաջնահերթության սկզբունքով՝ իրենց կողմից ընտրված ժամին, իսկ տեղում կտրոն վերցրած քաղաքացիներն սպասարկվում են առաջին իսկ ազատ պատուհանի առկայության ժամանակ:

ՀՀ քաղաքացու անձնագիրը տրամադրվում է դիմումը գրելուց հետո 5-րդ աշխատանքային օրը, իսկ անձնագրի կորստյան դեպքում՝ 10-րդ աշխատանքային օրը: Պետական տուրքը 1000 դրամ է:

Կառավարության որոշմամբ սահմանված են նաեւ սեղմ ժամկետներ անձնագրի փոխանակման համար, եւ մատուցվում են արագացված ծառայություններ՝

1 աշխատանքային օր - 20 000 դրամ (հասանելի է Երեւանում)

3 աշխատանքային օր - 10 000 դրամ

Անձնագրի կորստյան դեպքում՝

1 աշխատանքային օր - 60 000 դրամ

3 աշխատանքային օր - 50 000 դրամ

5 աշխատանքային օր - 40 000 դրամ»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2022-2023 թվականներին գրանցված աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշների մասին:

Այսպիսով՝ 1000 մարդու հաշվով՝ անչափահասների եւ անաշխատունակների բացառությամբ, 2022 թվականին աշխատանքային ռեսուրսները եղել են 2 միլիոն 228 հազար 500 մարդ, իսկ 2023 թվականին՝ 2 միլիոն 223 հազար 200 մարդ:

Աշխատուժը (աշխատուժի առաջարկ) 2022 թվականին եղել է 1 միլիոն 311 հազար 300 մարդ, իսկ հաջորդ տարում՝ 1 միլիոն 341 հազար 200 մարդ, ինչը ավելի է նախորդ տարվա ցուցանիշից:

2022 թվականին զբաղվածների թիվը եղել է մեկ միլիոն 134 հազար 800 մարդ, իսկ հաջորդ տարում՝ մեկ միլիոն 174 հազար 400 մարդ. այս տարբերությունն ակնհայտորեն փաստում է այն մասին, որ 2023 թվականին զբաղված անձինք ավելի շատ են եղել, քան 2022 թվականին:

Գործազուրկ անձանց թիվը 2022 թվականին կազմել է 176.600 մարդ, իսկ 2023 թվականին՝ 166.700 մարդ: Սա մի փոքր ուրախալի փաստ է, քանի որ 2023 թվականին նվազել է գործարկության ցուցանիշը:

Աշխատուժից դուրս բնակչության թվաքանակը 2022 թվականին կազմել է 917.200 մարդ, իսկ 2023 թվականին՝ 882.100 մարդ:

Ինչ վերաբերում է բնակչության տնտեսական ակտիվությանը, ապա 2022 թվականին աշխատուժի մասնակցության մակարդակը կազմել է 58.8 տոկոս, իսկ 2023 թվականին՝ 60.3 տոկոս: Նշենք, որ այս ցուցանիշները հաշվարկված են աշխատանքային ռեսուրսների թվաքանակի նկատմամբ:

Զբաղվածության մակարդակը 2022 թվականին կազմել է 50.9 տոկոսը, իսկ հաջորդ տարում՝ 52.8 տոկոս: Համեմատելով ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ 2023 թվականին զբաղվածության ցուցանիշը մոտ 2 տոկոսով ավելացել է:

Նշենք, որ այս ցուցանիշները նույնպես հաշվարկված են աշխատանքային ռեսուրսների թվաքանակի նկատմամբ:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 2 մարդ զոհվել է, 18-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Աշոտ Թորոսյանս, Արաբկիր համայնքում օգոստոս ամսին կորցրել եմ PB N004892 դիպլոմս՝ ստացած 1988 թվականին: Գտնողին խնդրում եմ զանգահարել +374 91 420 024 հեռախոսահամարով:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ՝ 2025–ԻՑ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 17-ի նիստում փոփոխություն կատարեց իր որոշումներից մեկում՝ այն համապատասխանեցնելով ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածում կատարված լրացումներին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածում, մասնավորապես, սահմանվել է, որ եկամտային հարկի վերադարձման համակարգը 2027-ի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի կիրառվելու, եթե գույքը գտնվում է Երեւանին հարակից՝ Արագածոտն, Արարատ, Արմավիր եւ Կոտայք մարզերում, իսկ 2029-ի հունվարի 1-ից այն տարածվելու է բոլոր մարզերի վրա:

Բացի այդ, սահմանվել է, որ 2025 թվականի հունվարի 1-ից հետո եկամտային հարկի վերադարձը եռամսյակի կտրվածքով չի կարող գերազանցել 750 հազար դրամը: Հիմա դա սահմանված է 15 մլն դրամ:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ՀՀ կառավարության որոշումը համապատասխանեցնել ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածում կատարված լրացումներին:

«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» ՓԲԸ–Ն ԱԶԱՏՎԵՑ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 17-ի նիստում որոշեց մաքսատուրքից ազատել «ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ» փակ բաժնետիրական ընկերությանը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ դեռեւս 2023-ի հունիսի 16-ի որոշմամբ այս ընկերությունը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ազատվել էր ներմուծման մաքսատուրքից եւ այդ ժամանակ ընկերությունը ներկրել է թվով 15 տրոլեյբուսներ:

Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել ներմուծել 1.5 մլրդ դրամի եւս 15 նոր տրոլեյբուս՝ էկոլոգիապես մաքուր էլեկտրատրանսպորտով բնակչության ապահով ու անվտանգ տեղափոխումն ապահովելու նպատակով:

Իրականացվող լրացման արդյունքում ապրանքների ընդհանուր արժեքը կկազմի 3.6 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 463.6 մլն դրամ:

«ԻՄ ԱՄԵՐԻԱ, ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» Գ

ԲԱՆԿԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

«Ամերիաբանկը» մեկնարկում է «Իմ Ամերիա, իմ Հայաստան» նախագիծը եւ նախագծի շրջանակում իրականացվող երեք արշավները՝ «Իմ Ամերիա, իմ Հայաստան», «Իմ Ամերիա, իմ տուն» եւ «Իմ Հայաստան, իմ ապագա»: Նախագծի եւ արշավների նպատակն է միավորել մարդկանց «Ամերիաբանկի» առաքելության իրականացման շուրջ եւ միասին բարելավել կյանքի որակը:



«Մեգերյան կարպետ»-ում այսօր կայացած մամուլի ասուլիսի շրջանակում «Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն ու մանրածախ բանկինգի տնօրեն Արման Բարսեղյանն ազդարարեցին նախագծի մեկնարկը եւ ներկայացրին արշավների նպատակն ու մասնակցության մանրամասները:

«Ամերիաբանկ»-ը հրավիրում է բոլորին միանալ «Իմ Ամերիա, իմ Հայաստան» արշավին եւ այս անգամ միասին ընտրել այն ոլորտները, որոնց ուղղվելու է «Ամերիաբանկ»-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ու բարեգործական ծրագրերի բյուջեից 100 մլն ՀՀ դրամը:

Նշենք, որ այս բոլոր ուղղություններով «Ամերիան» առ այսօր իրականացրել է ավելի քան 2,7 մլրդ ՀՀ դրամի բարեգործական եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախագծեր:

Քվեարկության ուղղությունները 8-ն են՝ երեխաների առողջություն, կրթություն, կայուն զարգացում, ՓՄՁ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, գիտություն, մշակույթ եւ սպորտ: Քվեարկությունն անցկացվելու է հոկտեմբերի 16-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Քվեարկությանը կարող են մասնակցել բոլորը, սակայն բանկի հաճախորդները հնարավորություն ունեն 10 անգամ բազմապատկել իրենց ձայնը՝ քվեարկելով MyAmeria հավելվածի միջոցով:

«Իմ Ամերիա, իմ տուն» արշավի շրջանակում մինչեւ տարեվերջ «Ամերիան» կազմակերպում է մեծ վիճակախաղ, որով ընդգծում է Հայաստանում ապրելու եւ այստեղ հիմնավոր հաստատվելու կարեւորությունը՝ բանկի գործող եւ նոր հաճախորդներին հնարավորություն ընձեռելով շահել բնակարան Երեւանի նորակառույցներից մեկում:

Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է մինչեւ դեկտեմբերի 31-ը հավաքել պրոմո կոդեր:

Պրոմո կոդ ստանալու տարբերակները բազմազան են՝ բացել հաշիվ «Ամերիաբանկ»-ում, պատվիրել քարտ, մուտք գործել MyAmeria, կատարել գործարքներ MyAmeria-ով, վճարել MyPay-ով, կատարել գործարքներ MyInvest-ով եւ հրավիրել ընկերներին՝ դառնալու «Ամերիաբանկ»-ի հաճախորդ, օնլայն հարթակներով ստանալ հիփոթեք եւ ավտովարկ, ինչպես նաեւ բացել հաշիվ «Ամերիա Բիզնես» հարթակով:

«Իմ Հայաստան, իմ ապագա» արշավի նպատակն է բացահայտել եւ խրախուսել ակտիվ, Հայաստանի ապագայի հանդեպ սրտացավ, ճկուն եւ պայծառ մտածելակերպ ունեցող ուսանողներին. «Ամերիաբանկ»-ը եւ VISA-ն հայտարարում են մրցույթ Հայաստանի պետական եւ մասնավոր բուհերի բոլոր ուսանողների համար, որի շրջանակում բացահայտված լավագույն երիտասարդները հնարավորություն կունենան ստանալու երեք մրցանակ՝ 160 կրթաթոշակ, 10 լավագույնները կստանան հնարավորություն աշխարհի լավագույն բուհերից մեկում ուսանողական կարճաժամկետ ծրագրի մասնակցելու, ֆինանսավորում՝ ընդհանուր մինչեւ 10 մլն դրամի չափով:

Կրթաթոշակին հավակնելու համար անհրաժեշտ է լինել առնվազն 2-րդ կուրսի ուսանող, հավաքել ամենաբարձր միավորները թեստից եւ ունենալ բուհի սահմանած առավելագույն արժեքի նվազագույնը 65 տոկոսին համարժեք ՄՈԳ, իսկ նախագծի եւ ուսանողական ծրագրին մասնակցելու համար պետք է ապահովել առավելագույն արդյունք եւ՛ թեստից, եւ՛ նախագծի գնահատումից:

Միջոցառման շրջանակում «Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանը նաեւ ամփոփ ներկայացրեց բանկի գործունեության վերաբերյալ մի քանի ցուցանիշ: Մասնավորապես՝

1. Գործունեության ամբողջ ընթացքում «Ամերիաբանկ»-ը միջազգային հեղինակավոր ամսագրերի կողմից ստացել է ավելի քան 100 մրցանակ:

2. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից բանկը ներգրավել եւ Հայաստանի տնտեսության զարգացմանն է ուղղել ավելի քան 1 մլրդ ԱՄՆ դոլար:

3. «Ամերիաբանկ»-ի կողմից ՀՀ ՓՄՁ ոլորտի զարգացմանն է ուղղվել ավելի քան 500 մլրդ ՀՀ դրամի ֆինանսավորում:

4. 10-րդ տարին անընդմեջ «Ամերիաբանկ»-ն առաջատարն է վարկային պորտֆելի մեծությամբ՝ 30.09.2024-ի դրությամբ ավելի քան 1,13 տրիլիոն ՀՀ դրամ:

5. Վերջին 5 տարիներին «Ամերիաբանկ»-ը եղել է ամենախոշոր հարկատու բանկը Հայաստանում. պետբյուջե է վճարվել շուրջ 58 մլրդ ՀՀ դրամի հարկ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

6 ՀԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿՏՆԿԵՆ ՄՈՏ 20,000 ՏՆԿԻ

«Արդշինբանկ»-ի աշխատակիցները նախաձեռնել են տնկել եւ աճեցնել սեփական անտառը: Բանկի ուղերձում, նշվում է. «Արդշինբանկը, որպես Հայաստանի խոշորագույն առեւտրային բանկ, լիովին գիտակցում է իր դերի կարեւորությունը շրջակա միջավայրի պաշտպանության եւ այս կարեւոր գործով զբաղվող համայնքներին աջակցելու գործում: Մենք հպարտությամբ հայտնում ենք մեր անտառածածկույթի վերականգնման եւ ընդլայնման ծրագրի մեկնարկի մասին: Նախագիծն ընդգծում է բանկային բիզնեսի մեծ դերը մեր երկրի կանաչ ապագայի համար պայքարում»:

My Forest Armenia հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակում անցկացվեց կաղնու սերմերի հավաքումը Գեղարքունիքի մարզի բնական անտառներում: Կազմակերպիչները նախատեսում են 6 հա տարածքում տնկել մոտ 20000 տնկի, որոնք ի վերջո կվերածվեն «Արդշինբանկի» անունով մեծ անտառային տարածքի, այս վերջինն էլ 30 տարվա ընթացքում կկլանի մոտ 150 տոննա CO2 արտանետումներ:

«Անտառները կենսական կարեւորություն ունեն Հայաստանի համար, դրանք ոչ միայն մեր երկրի գեղեցկությունն են, այլեւ մեր ժողովրդի առողջությունը: Հիմա մենք ճամփորդության հենց սկզբում ենք, քանի որ ծառը սկսվում է փոքր հատիկից, որին դեռ սպասվում է անցնել երկար ու դժվարին ճանապարհ: Իհարկե, կան որոշակի մտահոգություններ, թե արդյոք սերմերը կբողբոջե՞ն կամ տնկիները կպահպանվե՞ն: Բայց մենք սերմերը հանձնեցինք պրոֆեսիոնալների վստահելի հոգածությանը: Լոռու մարզի Ձրաշեն եւ Ուրասար համայնքներում նմանատիպ ծրագրի վրա մենք արդեն հաջողությամբ աշխատել ենք My Forest Armenia կազմակերպության հետ: Այս նախագիծը սկսվածի շարունակությունն է եւ հնարավորություն մեզանից յուրաքանչյուրի համար՝ նպաստելու Լոռու մարզի անտառածածկույթի վերականգնմանն ու հզորացմանը»,- ասաց «Արդշինբանկի» վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն Լուսինե Ներսիսյանը:

Լուսինե Ներսիսյան համոզված է, որ այս միջոցառումը ոչ միայն նպաստելու է անտառածածկույթի ավելացմանը, այլեւ ավելի է համախմբելու «Արդշինբանկի» թիմին, չէ որ բանկի կարգախոսն է՝ «Մենք ուժեղ ենք միասին»:

«150 աշխատակիցներ գնացել են Դիլիջան՝ սերմեր հավաքելու: Այսպիսով՝ մեր համատեղ ջանքերով մեզ հաջողվեց հավաքել 108 կգ կաղին: Մենք անհամբեր սպասում ենք տնկիների ի հայտ գալուն, իսկ հետո՝ լիարժեք անտառին: Սրանում կասկած չունեմ, ինչպես եւ կասկած չունեմ, որ յուրաքանչյուր տնկված ծառ ոչ միայն նոր քայլ է դեպի առողջ ապագա մեր երկրի անկրկնելի բնության համար, այլ նաեւ քայլ դեպի մեկից մյուսս, քանի որ միայն միասին ենք մենք ուժեղ»:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ. ՀԱՆՃԱՐԻ ՈՒՂԻՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Հայ գրականության հսկաներից մեկի՝ Ավետիք Իսահակյանի գիրը առ այսօր շարունակում է արդի մնալ: Անգամ տպավորություն է ստեղծվում, որ մեծանուն գրողը մարգարեացած գուշակել է մեր օրյա իրականության մասին:



Իսահակյանի ավանդը, ինչպես յուրաքանչյուր տաղանդավոր հայի, այնքան մեծ է, որ Հայաստանում նրա անվամբ կան անվանակոչված փողոցներ, գյուղեր, գրադարաններ, հուշարձաններ: Իսահակյանի անունը նաեւ փորագրված է Երեւանի օղակաձեւ զբոսայգու չորրորդ՝ 2023 թվականի ապրիլի 25-ին բացված «Ազգային արժանապատվության ասպետներին» աղբյուր-հուշակոթողին:

Հոկտեմբերի 17-ին Իսահակյանի հիշատակի օրն էր:

ArmLur.am-ը ներկայացնում է գրողի հուշերից մի քանի դիպված:

Ավետիք Իսահակյանի հուշերը լի են իր կյանքի հետաքրքիր դեպքերով ու հայտնի մարդկանց հետ հանդիպումներով, որոնցից մեկն առանձնապես հիշարժան է եղել գրողի կյանքում:

Իսահակյանն իր թոռնիկին պատմել է, թե ինչպես են մի անգամ Թումանյանի հետ քայլել Երեւանի փողոցներով եւ քննարկել գրականության, քաղաքականության եւ հայ ժողովրդի ճակատագրի վերաբերյալ: Իսահակյանը հիացմունքով է խոսել Թումանյանի իմաստնության եւ պարզության մասին: Թումանյանը, լինելով ավագ եւ փորձառու գրող, Իսահակյանին մշտապես ոգեշնչել եւ խրախուսել է: Իսահակյանն իր հուշերում նշել է, որ Թումանյանը միշտ խորապես մտածված եւ մարդկային մոտեցում ուներ գրականության եւ կյանքի հանդեպ:

Այս հանդիպումը վկայությունն է այն բանի, թե որքան կարեւոր էին Իսահակյանի համար նման մտավորականների հետ շփումները: Նա իր հուշերում հաճախ է ընդգծել, թե որքան մեծ ազդեցություն են ունեցել իր վրա նմանատիպ հանդիպումներն ու զրույցները, որոնք նպաստել են ոչ միայն նրա գրական, այլեւ կենսափորձի զարգացմանը:

Այս եւ նմանատիպ հուշերը կարեւոր են նաեւ հայ գրականության պատմության համար, քանի որ նրանք ներկայացնում են հայ մշակույթի երկու հսկաների՝ Իսահակյանի եւ Թումանյանի մտերմությունը, ինչը ցույց է տալիս նրանց երկուստեք հարգանքը միմյանց հանդեպ, ինչպես նաեւ նրանց մտահոգությունն ու սրտացավությունը հայրենիքի, գրականության եւ ազգի ապագայի մասին:

Գրողի հուշերում տեղ է գտել նաեւ Մաքսիմ Գորկին, որի հետ հանդիպումը Իսահակյանը եւս հիշատակել է:

Նրանք ծանոթացել են 1906 թվականին, երբ Իսահակյանը գտնվում էր արտասահմանում եւ ակտիվորեն մասնակցում էր հայկական ազատագրական շարժմանն ու միաժամանակ զբաղվում էր գրական գործունեությամբ: Գորկին, լինելով ժամանակի մեծագույն գրողներից մեկը, խոր տպավորություն էր թողել Իսահակյանի վրա: Նրանք զրուցել են գրականության, հեղափոխության եւ սոցիալական արդարության թեմաներով:

Իսահակյանը իր հուշերում նշել է, որ Մաքսիմ Գորկու խոսքը լի էր հումանիզմով ու ժողովրդի հանդեպ սիրով: Այս հանդիպումը նրան ավելի էր մոտեցրել ռուսական գրականությանը եւ խթանել նրա հետաքրքրությունը համաշխարհային գրական գործընթացների նկատմամբ:

Հետագայում Իսահակյանը Գորկու հետ մի քանի անգամ հանդիպել է տարբեր առիթներով, եւ նրանց միջեւ ձեւավորվել էր փոխադարձ հարգանք ու մտերմություն:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ FrancoFest24–ՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը մասնակցել է Newmag հրատարակչության կողմից կազմակերպված FrancoFest2024-ին:

Փառատոնի ընթացքում ելույթ ունեցավ նաեւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի սեքստետը՝ հանդիսատեսին նվիրելով Ազնավուրի լավագույն ստեղծագործությունները՝ դասական հնչողությամբ:

Նվագախումբը փառատոնին ներկայացրեց 2024 թվականին հայտնի թավջութակահար Կամիլ Տոմայի հետ համատեղ թողարկված «Ազնավուրիանա» ալբոմը, որում ընդգրկված են Շառլ Ազնավուրի սիրված երգերը՝ փոխադրված թավջութակի եւ նվագախմբի համար: «Ակբա բանկ»-ի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ ստեղծված «Ազնավուրիանա» ալբոմը, որը 2024թ.-ին թողարկվել է աշխարհահռչակ «Դոյչե Գրամոֆոն» ձայնագրային ընկերության կողմից, արդեն կարող է դառնալ յուրաքանչյուրինը:

Իսկ ընթերցասերներն իրենց հետ տարան նաեւ «կենդանի» էջանիշներ՝ ARLOOPA հավելվածի միջոցով նաեւ լսելով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից ներկայացվող ազնավուրյանական հնչյունները:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18–20–Ը՝ «ԱՐՑԱԽԻ ՕՐԵՐ»

Ավանդական խաղեր, երգ ու պար, վարպետության դասեր, ցուցահանդես ու տոնավաճառ:

«Արցախի օրեր» միջոցառումների շարքը երեք օր կտարածի արցախյան շունչն ու յուրօրինակ կոլորիտը՝ հնարավորություն տալով վայելելու Արցախի գույները, հնչյունները, համերն ու մշակույթը:

Միջոցառման մեկնարկը կտրվի այսօր՝ հոկտեմբերի 18-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի Կինոյի տանը: Բացման համերգին ելույթ կունենա Արցախի պետական ջազ նվագախումբը, ցուցահանդեսին կներկայացվեն «Դիզակի գույները» կտավները եւ արցախցի նկարիչների կտավները, հնարավորություն կլինի շփվելու արտիստների հետ:

Միջոցառումները կշարունակվեն հաջորդ օրը՝ ժամը 15:00-ից, Մասիսի կենտրոնական այգում: Ելույթ կունենա «Դիզակ ԱՐՏ» ՀԿ երգի-պարի համույթը, տեղի կունենան արցախյան ավանդական ուտեստների համտես, արցախցիների կողմից ձեռագործ իրերի ցուցադրություն եւ վաճառք:

«Արցախի օրերի» վերջին օրն էլ՝ ժամը 13:00-ին, Մեղրաձորում՝ Կճուճներ կոչվող տարածքում տեղի կունենա «Գուպար» ազգային խաղերի մրցույթը՝ «Վարք Հայոց» երգ ու պարի խմբի կատարումների ուղեկցությամբ:

Միջոցառումների շարքը նպատակ ունի նպաստելու Արցախի հարուստ մշակութային ժառանգության ներկայացմանն ու պահպանմանը, ինչպես նաեւ հարթակ ապահովելու արցախցի ձեռներեցների զարգացման համար:

Կազմակերպիչները բոլոր ցանկացողներին հրավիրում են միասին բացահայտելու Արցախի անկրկնելի մշակույթն ու միասին անցկացնելու 3 գունեղ օրեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՈՒՐԱՐՏՈՒ»–Ն ՀԱՂԹԵՑ «ՎԱՆ»–ԻՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության՝ Պրեմիեր լիգայի 11-րդ տուրի շրջանակներում միմյանց դեմ մրցեցին «Ուրարտու»-ն եւ Չարենցավանի «Վան»-ը:

«Ուրարտու-1» մարզադաշտում կայացած խաղում տան տերերի՝ «Ուրարտու»-ի ֆուտբոլիստներին հաջողվեց երեք գնդակ ուղարկել «Վան»-ի դարպասը՝ սեփականն ընդունելով միայն մեկը:

«Ուրարտու»-ից աչքի ընկան Սերգեյ Մկրտչյանը, Իվան Իգնատեւը, Արտյոմ Պոլյարուսը, իսկ «Վան»-ից՝ Իզուչուկվու Օկոնկվոն:

Հայաստանի առաջնությունում այս տուրի շրջանակներում կկայանան նաեւ «Շիրակ»-«ՎեստԱրմենիա», «Արարատ-Արմենիա»-«Արարատ», «Գանձասար»-ԲԿՄԱ խաղերը: Առավել վաղ կայացած խաղում «Նոա»-ն 0:6 հաշվով առավելության էր հասել «Ալաշկերտ»-ի նկատմամբ:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԴԱԼՆԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի բռնցքամարտի կանանց հավաքականի անդամ Էլիդա Քոչարյանն ապահովել է Եվրոպայի երիտասարդների առաջնության բրոնզե մեդալը:

Բուլղարիայում ընթացող Եվրոպայի Մ21 տարեկանների առաջնության 60 կգ քաշի գործող չեմպիոն Էլիդա Քոչարյանը 1/4 եզրափակչում հաղթել է վրացի Լանա Բոլկվաձեին եւ դուրս եկել կիսաեզրափակիչ՝ ապահովելով առնվազն բրոնզե մեդալ:

Հոկտեմբերի 16-ին կիսաեզրափակիչ դուրս գալու եւ մեդալ ապահովելու համար կպայքարեն տղաները: 1/4 եզրափակչում Հայաստանն ունի 8 բռնցքամարտիկ:

ԹՈՄԱ ՏՈՒԽԵԼԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԴԱՐՁԱՎ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ

Անգլիայի ֆուտբոլի ազգային թիմի նոր գլխավոր մարզիչը գերմանացի Թոմաս Տուխելն է: Այս մասին հայտնում է Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան:

Տուխելը մարզչական աշխատանքի կանցնի 2025 թվականի հունվարի 1-ից: 51-ամյա Տուխելը երրորդ ոչ բրիտանացի մասնագետն է, ով գլխավորում է Անգլիայի հավաքականը:

«Ինձ համար մեծ պատիվ է հնարավորություն ստանալ գլխավորելու Անգլիայի ֆուտբոլի հավաքականը»,- ասել է գերմանացի մասնագետը:

Մինչ այս Անգլիայի ֆուտբոլի ազգային թիմի գլխավոր մարզչի պաշտոնը զբաղեցնում էր Գարեթ Սաուդգեյթը, ով թիմի մարզչի պաշտոնից հեռացավ Եվրոպայի առաջնությունից հետո:

Թոմաս Տուխելն առավել վաղ աշխատել է գերմանական «Մայնզ»-ում, Դորտմունդի «Բորուսիա»-ում, Մյունխենի «Բավարիա»-ում, անգլիական «Չելսի»-ում ու ֆրանսիական ՊՍԺ-ում:

● *Հոկտեմբերի 21-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Art փսիխոզ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ արտոնություններ ունեն հաշմանդամները:

Սիրան Պողոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝

- ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում եւ կարող են օգտվել սահմանված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու արտոնություններից,
- ընդգրկված են անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում: 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,
- ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող եւ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,
- 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,
- իրավունք ունեն ստանալու աջակցող միջոցներ՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական եւ այլ օժանդակ միջոցներ՝ համապատասխան վերականգնողական անհատական ծրագրին, պետական հավաստագրի հիման վրա:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչեւ 18 տարին լրանալը եւ անժամկետ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ չափանիշներ են հաշվի առնվում վարկ տրամադրելիս: Արդյոք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավո՞ր է դիմողի հետ կնքել վարկային պայմանագիր:

Համլետ Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում՝ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետեւյալ հանգամանքները՝

աշխատավարձի եւ այլ եկամուտների առկայությունը,
վարկային պատմությունը,
անշարժ եւ այլ գույքի առկայությունը,
երաշխավորների առկայությունը,
տարիքը,
այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եվ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վարշավայում բացվեց Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված ցուցահանդես:

Փարաջանովի ինքնատիպ արվեստը ներկայացնող ցուցահանդեսը գրավել է լեհ արվեստասեր հանրության ուշադրությունը. այն կգործի մինչեւ 2025 թ. հունվարի 12-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
	Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
	Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
	Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
	Լոռի	+ 3 + 7 +12 + 16
	Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
	Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
	Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

	Արարատ	+ 9 + 11 +19 + 22
	Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
	ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
	Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*